31. ԱՌՈՒԾԻՆ ՆԱՆ ԿԱՏՎԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Մին մարթ ա ինում՝ Շարո անըմավ։ Էս մարթը ամմեն օր քյնամ ար քոլը՝ մին շելակ փեդ պիրում ծախըմ։ Էտ շելակ փեդավը կլոխ ին պահում։ Մին դոնըմ էլ ծմակ քյինալիս ուրանց կատուն էլ նհետ ը քյինամ ա քոլը։ Էս մարթը մին կաղնե ծառ ա քթանում, սկսում ճղորտիլ։ Էտ ծառըմրտ խուլեր կար, տժար ար ճղվում։ Մարթը սկսում ա չըրշարվելը, վար ճղե։ Կատուն էտ մարթին շորս ընգյունին շոռ ա կյամ, վար մոկուն յա մին օրիշ պան քթենա, օտե։ Ման կյալիս ուրդան կատվին մին առուծ ա պտահում։

Առուծը եշում ա կատվեն կլխեն, վընեներեն, շանեն, հաքյվեն, ետնան հըրցնում կատվեն անա, թա.— Կա՛տու ախպեր, տու հանց ըս մեր ազկան ինի՞ս։

Կատուն ասըմ ա.— Հա, ծեր ազկան ըմ։

Առուծը ասըմ ա.— Պա վար մեր ազկան ըս, խե՞ տհենց կուճուր ըս։

Կատուն պագասխանում ա ըռուծեն.— Գյունդում չըմ ըտեղ հի՞նչ կա, առուծ ախպեր, վար տու վէլ մարթու ճանգյ ընգնիս, տու վէլ կկըրճանաս։

Առուծը ասըմ ա.— Կա՛տու ախպեր, մարթը էտ հի՞նչ պան ա՞, վար քյըեզ էտքան կուճուրցրալ ա։

Կատուն ասըմ ա.— Օղըմ ը՞ս մարթ տըեսնաս։

Առուծն ասըմ ա.— Հա՛։

Կատուն առաչ ա ընգնըմ, ա̈ռո̈ւծը ընդրա հետան, Թո̈ւշին կյամ ըն մարթին կոշտը։

Առո̈ւծն ասըմ ա.— Պարյօր, մա՛րթ ախպեր։

Մարթն ասըմ ա.— Աստուծու պարին։

Առո̈ւծը հըրցնում ա.— Մա՛րթ ախպեր, լըսալ ըմ օժավ ըս, եք կո̈խըլը կենանք։

Մարթը ծիծըղելավ պադասխանում ա.— Ըստեղ կոխըլը կենամ հի՞նչ տա̈ռնա, եք քյնինքյ շենումը կոխըլը կենանք, վար մեր շենին մարթիքյը տեսնան։

Մարթը օղում ա վար ա̈ռո̈ւծեն շենը տանե, վար սպանե, մհենգյ էլ բո̈ւրդա̈ն մտածում ա, վար ստեղ էլ կկարե սպանե։

Առո̈ւծին ասըմ ա.— Ախպեր, տու օժա՞վ ըս։

Ասըմ ա.— Հա՛։

Մարթն ասըմ ա.— Վար օժավ ըս, մին վըեննըտ տիր էս փա̈դին ղաթըմը, տեսնամ՝ օժավ ը՜ս.

Առո̈ւծը գյիդո̈ւմ ա, Թա̈ ո̈ւրա̈ն ամմեն օրվա ծառերն ա, կլխավը լոք տամ էս ղոլը, էն ղոլը, վըեննը տինում ա էն տժա̈ր ճղվելիս ծառեն ճեխկեն մաշին։ Մարթը սեպին Թխում ա, սեպը տո̈ւս ա պրծնում, ծառը ա̈ռո̈ւծին վըեննը հոփ ա տամ։ Տես ա ծիքյ տամ, տեն ա ծիքյ տամ, տո̈ւս չի կյամ։

Մարթը տեսնում ա, վար ա̈ռո̈ւծը վըեննը կարում չի տո̈ւս օնե, սկսում ա կացնավը կլո̈խը Թակելը։ Թակելիս վախտը ա̈ռո̈ւծը ասում ա.

— Կա՛տու ախպեր, վար քյըեղ մչանք տա̈ռնա̈մ, պա̈ց ա Թուղլակա՜ն։

Կատուն ասըմ ա.— Քու տոնըտ քանդվի, վըրղեղա յա պա̈ց Թուղլական, սպանալ ա, պրծա՜լ։

Տհենց էլ մարթը սպանում ա ա̈ռո̈ւծին, մորթեն տոն պիրում. մին քյո̈ւլքյ կարում, կյենում։ Էտ օրվանից մի քանե տարե էտ քյա̈սիր մարթը էլ մրսում չի՜։